

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԱՐՄԱՇՈՒ ԳԷՈՐԳ Ե. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԼԵՆԳՐԻՍ.

Անցեալ Գեկտեմբեր ամսոյ սկիզբն Հայաստանեայց Եկեղեցւոյ ընտիր և արգինաւոր մշակներէն մին տարաժամ կնքեց իր անցաւոր կենաց ընթացքը յերիտասարգ հասակին:

Արմաշու Չարխախան Ս. Աստուածածնի Վանոց Ամնահայր Գէորգ Արքազան Մպիսկոպոս էր այս:

Ի բազմաց հետէ ենթարկուած էր մի ապստամբ ակտի, յորմէ թէ և զեղօրէիք զանձն ազատի կըմայր, բայց հմուտ բժշկաց ջանքերն ի վերջոյ ապարդիւն կնքուեցան:

Վսխիթարուիմք հոգւով՝ հանգուցելոյն կեանքը բազմարդիւն և օգտաւէտ գործոց պատկեր թողած լինելով:

Եւր արժանաւորութեամբ Չմիւռնիոյ վիճակին երբեմն Փոխ. — Առաջնորդ եղաւ բարեխիշատակ Պօղոս Արքազանի կողմանէ, և Արմաշու Վանոց ի նոյն ժամանակս անհրաժեշտ պիտոյքներէն մանաւանդ թէ միաբանութեան թախանձանքէն և հրաւերներէն ստիպեալ՝ հրաժարեցաւ Փոխանորդական պաշտօնէն, — գոր Չմիւռնապետց մեծ համակրութիւնք և հանրազրութիւնք չարացին արգելուլ, և ի հաւատարմ յարգանաց և սիրոյ իւրեանց՝ զոհունակ վկայականներ յանձնեցին նմին, թէ և շարունակ չզարարեցան ինդրին՝ որ յանձն առնու կրկին նոյն պաշտօնը՝ ցորչալի Պօղոս Արքեպիսկոպոս Պատրիարք էր:

Եղմիրէն Արմաշ վերադառնալով՝ — ուր ուսումն առած և միաբան էր, առաւել ոգևորեալ սկսաւ ջանալ և գործել թէ Վանոց և թէ Ազգի և Եկեղեցւոյ օգտին համար:

Ժառանգաւորաց դպրոցը առաւել բարեկարգեց և ծաղկեցոյց, ծպարան հաստատեց, Յոյ ամապիրը խմբագրութեամբ միաբանութեան հրատարակեց:

Զկնի վասնձանի Եփրեմ՝ Վարդապետի Պրուսացւոյ՝ ի միաբանից ընտրուեցաւ Ամնահայր, որով առաւել արձակ և յաջող գործունէութեան ասպարէզ բացուեցաւ իւր ընդառաջ:

Վանոց տաճարը կարի հին և անշուք և ուխտաւորաց համար նեղ գոլով, քանդել տուաւ և ի հիմանէ նորը կառուցուեցաւ, որոյ համար անձամբ շատ տեղեր ժողովարարութեան շրջագայեց և փող հաւաքեց, և այս պաշտօնին մէջ ստացաւ ծանր փետր, և իւր հոգեւոր փափաքը լեցնելոյ համար՝ օժման ի հանդիսին իւր հիւանդութեան ծանր միջոցին մէջ պատգարակաւ բարձրացաւ և օժեց Ս. Սեղանի ճակատի Խաչը: Վանքին մէջի ուսումնարանը ի նորոյ ընդարձակեց և այլ կարեւոր շինութիւններ շինել տուաւ:

Աւթին չափ ընտիր և ուսումնական աշակերտներ յառաջացան Վանոց ժառանգ ուսումնարանէն, բաց ի քահանայացու և այլ աշակերտներէ՝ զանիւքն իւրովք, զորս ինքն ձեռնադրեց յաստիճան կուսակրօն Քահանայութեան անցեալ 1872 տարւոյ երօրդ քառօրդին մէջ:

Վանոց մէջ նախանձնի բարեկարգութիւնք մտցուց և կանոնիւք հաստատեց, որով նոյն Վանոց ներկայն և ապագայն արդարեւ իրիտ մսխիթարական և փառաւոր է Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ համար:

Սոցա հետ ի միասին՝ արժանախիշատակ Գ. Մպիսկոպոս ինքն գոլով ուսումնական, պարկեշտ, բարեբարոյ, եռանդուն, ուշիմ, հեռատես, միանգամայն Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնից՝ ծիսից՝ արարողութեանց՝ օրինաց և աւանդութեանց քաջահմուտ՝ նախանձախնդիր և ջերմ պաշտպան էր:

Վերջին Սասկան անցից մէջ անյաղթելի փոյնեան էր հանդերձ Միաբանութեամբ Աւետին ընդդէմ՝ Սասնօրաց և հակառակորդաց ամբողջութեան Եկեղեցւոյ մերոյ, և առ ոչինչս գրելով նոցա լարած որոգայթները և ճարտարները, ընտիր յօրուածներով ուղղակի և անուղղակի կմարտէր նոցա դրուածոց և զրպարուութեանց դէմ:

Յոյ ամապիրն առժամանակեայ դարարած լինելով՝ ներկայ տարւոյս սկիզբէն պիտի շարունակուէր հրատարակութիւնը, բայց նորա կանխահաս հանգիստն ի յախտեանակութիւն՝ առժամանակ ինչ յետաձգեց:

Հանգուցեալն ունի արժանաւոր աշակերտներ և միաբանակից եղբայրներ, յորոց ի տեղի իւր արժանաւորապէս ընտրուեցաւ Արժանապատիւ Խորէն Վարդապետ Աջգեան:

Մաղթեմք ի Տեառնէ՝ լուսաւորել զհոգի հանգուցելոյն ի լոյս երեսաց իւրոց և փառաւորել ընդ սուրբս և ընդ սիրելիս ունուան իւրոյ:

Յիշատակն արարոց օրհնութեամբ եղիցի:

